

Դիմելի գլխիցինը (ԴՄԳ), ոչ-թունավոր նյութափոխանակյալ, և օտիզմը

Bernard Rimland, Ph.D.
Autism Research Institute
4182 Adams Avenue
San Diego, CA 92116

ԴՄԳ-ն հարաբերաբար քաղցրահամ մի նյութ է, որը նկարագրվել է Journal of Laboratory and Clinical Medicine-ում (1990, 481-86) վերջերս լույս տեսած մի հոդվածում որպես «բնական, պարզ բաղադրյալ նյութ, որը ճանաչված կողմնակի ազդեցություններ չունի»: Հոդվածը չի առնչվել օտիզմում ԴՄԳ-ի օգտագործմանը, բայց, ընդհանրապես, նկարագրել է մի փորձարկում, որտեղ ԴՄԳ-ն օգտագործվել է տարրալուծարանում նապաստակների անընկալունակ համակարգի գործունեության զարկ տալու համար: Այն արդյունք է տվել. ԴՄԳ ընդունած կենդանիների անընկալունակ համակարգը ցուցաբերել է 300-ից 1,000 տոկոս ավելի լավ արձագանք վարակներին, քան՝ կառավարված մոտեցումը:

ԴՄԳ-ն հեշտ է գտնել առողջ ուտելիքների վաճառատներում: Այն ընդհանրապես դասակարգված է որպես ուտելիք: Նրա համար դեղատոմս հարկավոր չէ: Կան այն արտադրող մեկից ավելի ընկերություններ և գալիս է զանազան տեսակներով, ամենից հաճախ ասպիրինի 1/3-րդ չափը ունեցող ալյումինե թերթում փաթաթված փոքրիկ հատիկի ձևով:

Այն հաճելի համ ունի և երեխաները հատիկը ծամում են առանց դիմադրության: Հատիկը համարյա 25 ցենտ արժեքով՝ ծախքը աննշան է, քանի որ օրական մեկից մինչև ութ հատիկ է ընդունվում (ութ՝ չափահասների համար):

«Մինչև այստեղ ամեն ինչ լավ է», ասում եք երևի, «բայց ի՞նչ կապ ունի սա օտիզմի հետ»:

1965 թվին, երկու ռուս հետազոտողներ՝ M. G. Blumena և T. L. Belyakova, հրատարակեցին մի ուսումնասիրություն, ցույց տալով նկատառելի բարելավում 15 մտային խանգարում ունեցող երեխաներից 12-ի խոսելու կարողությունում: Երեխաները նախապես հաղորդակցելու համար չէին կարողացել խոսել: Երեխաներին դարմանել էին մի նյութով, որը այնպես ծանոթ է կալցիում պանգամատ կամ պանգամիկ թթու անունով, կամ՝ «վիտամին Բ15»:

Բացի հարուստ բառապաշարից, երեխաները սկսեցին օգտագործել պարզ նախադասություններ, նրանց ընդհանուր մտային վիճակը բարելավվեց, և նրանց մոտ նկատվեց ավելի լավ հաղորդակցություն և ավելի մեծ հետաքրքրություն խաղալիքների և խաղերի նկատմամբ: Հաջորդող հետազոտությունները ցույց տվեցին, որ կալցիում պանգամատում էական գործոնը ԴՄԳ-ն էր:

Անմիջապես հետո, հոգեբույժ Allan Cott-ը Մոսկվա այցելեց և հետը բերեց փոքր քանակությամբ պանգամիկ թթու, որը նա փորձեց իր դարմանած մի խումբ երեխաների վրա, որոնց մի մասը օտիստիկ էր: Cott-ի հիվանդներից շատեր ցույց տվեցին այն նույն արձագանքը՝ ինչ ռուս երեխաներն էին ցույց տվել: Մայրերից մեկը գրեց. «Սա իմ փորձառությունում ամենից խանդավառող բանն է: Նա բառեր էր կրկնում և այժմ հարցերի է պատասխանում...»:

Այդ ժամանակ էր որ պանգամիկ թթուն կամ Բ15-ը մուտք գործեց ԱՄՆ-ի շուկա: Քառուր հետևեց: Ամեն մի արտադրիչ իր արտադրանքը պիտակեց որպես «Ռուսական օրիգինալ ֆորմուլա»: Ծուկալույմ կար առնվազն չորս տարբեր ֆորմուլա, մասամբ, ինչպես կարծվում է, որպես արդյունք ռուսերի միտումնավոր խաբեության և առաջացրած աղոտության: ԴՄԳ-ն, փոքր քանակություններով, ֆորմուլաներից մի քանիսի բաղադրամասն էր: FDA-ը մեջ մտավ և երկա՛ր օրինական պայքար ծալր տվեց: Արդյունքներից մեկն եղավ այն, որ Բ15 եզրը օրենքից դուրս հոչակվեց: (Թեև ԴՄԳ-ն զանազան կերպերով նման է Բ վիտամիններին,-

գտնվում է նույն ուսելիքներում, օրինակի համար,- ոչ մի բացահայտ ախտանշան չկա, որը բնութագրիչ լինի ԴՄԳ-ի անբավարարության համար:)

Օրինական պայքարների նշանակալի արդյունքն եղավ այն, որ ԴՄԳ-ն ներկայումս թույլատրվում է, պայմանով, որ այն չներկայացվի որպես վիտամին և վաճառվի որպես ուսելիք և ոչ թե որպես դեղ:

Ես բանգամիկ թթվի-ԴՄԳ-ի կացությանը հետևում եմ համարյա 25 տարուց ի վեր: Ես այն նշել եմ իմ դասախոսություններից մի քանիսում, նրա մասին խոսել եմ մասնագետների և ծնողների հետ գիտաժողովներում կամ նամակներում: Միշտ խնդրում եմ. «Եթե այն փորձեք, խնդրում եմ ինձ իմացրեք ձեր գտած արդյունքի մասին, մինչև անգամ եթե բարելավում չի հայտնաբերվել»:

Ես այժմ համոզված եմ, որ ԴՄԳ-ն օգտակար է մեծ թիվով օտիստիկ երեխաների և չափահասների, և հետևաբար որոշել եմ հանրությանը ներկայանալ *Autism Research Review International*-ով, մարդկանց նրա մասին խոսել ազատորեն և բացահայտորեն, որպեսզի այն փորձեն ցանկության դեպքում:

Այս համարձակությունը լսողներից մի քանիսը թերևս զարհուրեն. «Որտե՞ղ են կրկնակի կույր պլաստիքով կառավարված գիտական ուսումնասիրությունները, որոնք ցույց տան նրա արդյունավետ լինելը օտիզմի համար», պիտի հարցադրեն նրանք: «Ոչ մի նման բան չկա, և դրանց կարիքն էլ չկա»: Ի հարկե կան բազմաթիվ կրկնակի կույր օտիզմին չառնչվող ուսումնասիրություններ ԴՄԳ-ի մասին գիտական և բժշկական գրականության մեջ, օգտագործելով ոչ միայն մարդկանց, այլ նաև զանազան տեսակի տարրալուծարանային կենդանիների, որոնց հաճախ տրվել է մեծ քանակությամբ ԴՄԳ: Ինչպես նախապես նշվեց, նույնիսկ խոշոր քանակությամբ ԴՄԳ ընդունելու դեպքում, ոչ մի բացասական կողմնակի ազդեցություն չի գտնվել: (Ես ասում եմ «ընդունում» փոխանակ «դոզայի», որովհետև «դոզան» կհուշի, որ ԴՄԳ-ն դեղ է, ինչ որ այդպես չէ:)

Քանի որ ոչ մեկ ընկերություն բացարձակ իրավունքը չունի ԴՄԳ սարքելու, մրցակցությունը գները,- և շահերը,- ցածր է պահում: Այսպիսով, բնավ հավանական չէ, որ որևէ անձ հովանավորի \$200,000-անոց կրկնակի կույր ԴՄԳ-ի ուսումնասիրություն օտիստիկ երեխաների համար: Ծնողը 30 հատիկ կարող է գնել մոտավորապես \$8-ով: Դա բավարար պաշար է մինչև անգամ մի չափահասի համար, որն ընդունում է օրական հինգ կամ ավելի հատիկ, ինչը շատ դեպքերում պետք է որոշվի, որ օգտակար է: Եթե զգացվի, որ օգնում է, հղակապ: Այլապես՝ վատնած կլինեք \$8.00 (բացի անընկալունակ համակարգի ն տրված խթանից):

Օգնելու համար, որ ծնողներն ստանան անկողմնակալ տեսակետ, ես սովորաբար նրանց ասում եմ երեխայի շրջապատի ուսուցիչներին, պապերին ու տատերին և այլ մարդկանց չասել, որ ԴՄԳ է փորձվում: Ես իմ թղթածրարներում ունեմ բազմաթիվ նամակներ, որոնք ասում են. «Ջոննիի խոսքի բուժման մասնագետն ասում է, որ վերջին երկու շաբաթներում նա շատ ավելի առաջադիմել է, քան անցած վեց ամիսներին: Ինչպես թելադրել էիք, մենք այս դպրոցում ոչ ոքի չենք ասել, որ ԴՄԳ ենք փորձում»:

Ես 100 տոկոսով կողմնակից եմ կրկնակի կույր ուսումնասիրությունների ենթարկել այն դեղերը, որոնք ունեն վնասելու հավանականություն, ինչպես՝ ֆենֆլուրամինը, Haldol-ը կամ նմանները: Այնուամենայնիվ, տրամաբանական չի թվում պնդել այդպիսի ընթացակարգերի համար՝ ԴՄԳ-ի, խնձորե կարկանդակի կամ հավի արգանակի նման կատարելապես անվտանգ նյութեր փորձելուց առաջ:

ԴՄԳ-ն արդյունավետ լինելու դեպքում՝ նրա ազդեցությունը սովորաբար երևան կգա մի շաբաթվա ընթացքում, թեև այն պետք է օգտագործվի մի քանի շաբաթ կամ մի ամիս՝ նրանից հրաժարվելուց առաջ: Որոշ դեպքերում կտրուկ շրջադարձեր են նկատվել 24 ժամից: Լուս Անջելոսում մի մայր մեքենան էր վարում ազատուղու վրա, մինչ երեք տարեկան Քեթինն նստել էր հետևի աթոռակին, իսկ հինգ տարեկան անխոս օտիստիկ որդին՝ Սամին գտնվում էր առաջի նստարանին: ԴՄԳ-ն սկսվել էր նախորդ օրը: Քեթին սկսեց լաց լինել: Սամին հետ

դարձավ և խոսեց իր առաջին բառերը. «Լաց մի լինի, Քեթի»: Շշմած մայրը հագիվ խոսափեց վթարից:

Նմանօրինակ մի ուրիշ դեպք՝ Տեխասից մի մայր իր վեց տարեկան համր օտիստիկ աղջնակը ամբաստանեց առաջի նատարանին և ճամբա ընկնելուց առաջ, դարձավ, որ իր ամուսնուն ասի. «Ես նախ Մերին կթողնեմ իր *բեյբիսիտրի* տանը»: Մերին, որը ԴՄԳ էր սկսել ընդունել երկու օր առաջ, իր ծնողներին զարմացրեց իր առաջին բառերով. «Ոչ. *բեյբիսիտրի* չեմ ուզում»: Թեև ԴՄԳ-ի օգնությամբ խոսելը ամենից ավելի նկատելի դրական փոփոխությունն է այս երեխաների մոտ, հաճախ նաև տեղեկագրվել է վարվեցողական բարելավում: Հայրերից մեկը, առանց դպրոցում որևէ բան ասելու, իր որդուն տվեց օրական մի ԴՄԳ-ի դեղահատ: Ավելի ուշ, նա դպրոցից խնդրեց մանրամասն վիճակացույցը իր որդու առօրյա վարվեցողական թերացումների: Պոթիկումներից ձերբազատ օրերի և ԴՄԳ-ի օգտագործման հարաբերակցությունը անսխալակա՞ն էր:

New England Journal of Medicine-ում (Հոկտեմբեր 1982) լույս տեսած մի հոդվածի համաձայն, 22 տարեկան դանդաղամտություն ունեցող մի մարդ, որը շաբաթական 16-ից 18 նոպա էր ունենում ստանտարդ հակաջղակծկիչներ ընդունելիս, շաբաթական միայն երեք նոպա ունեցավ ԴՄԳ ընդունելիս: ԴՄԳ-ն դադարեցնելու երկու փորձերը կտրուկ ավելացրեցին նոպաների հաճախականությունը:

Անցած տարի, ես ԴՄԳ-ի մասին տեղեկություն ուղարկեցի կորեական Pusan Երեխաների Խնդիրների Հետազոտական Կենտրոնի տնօրեն Lee Dae Kun-ին: Նա ԴՄԳ-ն փորձեց երեքից յոթ տարեկան 39 օտիստիկ երեխաների վրա, երեք ամիս, հետևյալ (ամփոփ) արդյունքներով՝

Նկատված օգուտներ՝ Այո՝ 31 (80%)

Ոչ՝ 8 (20%)

(խոսքի, ուտելու, արտազատումի, կամեցողության, կաշվի բարելավում)

8 երեխաներ քնելու դժվարություն ունեցան 1-ին և 2-րդ շաբաթներում:

6 երեխաներ ավելի աշխուժ դարձան 1-ին և 2-րդ շաբաթներում:

Lee Dae Kun-ը գրեց, որ ծնողները, սովորաբար թերահավատ, հստակորեն տեսան բարելավումները: Նա եզրակացրեց, որ ԴՄԳ-ն շատ օգտակար է օտիզմով երեխաների համար, անգամ եթե նա հիմնական դարման չէ:

Ավելի տարեց անձերի համար ԴՄԳ-ի օգտագործման մասին տեղեկությունները ևս քաջալերական են: Մայրը 26 տարեկան մի անձի, որը մի բանից դժգոհ մնալուց շատ ուժեղ սեղմում էր բաներ (մարդկանց, հեռուստացույց, կաշվի), ԴՄԳ-ն փորձեց բավականին թերահավատ, տեսնելու համար, որ այն արդյոք կխթանի՞ նրա կցկտոր խոսելակերպը: Այն չբարելավեց, բայց նշանակալի բարելավում բերեց դժգոհության նկատմամբ նրա հանդուրժողությանը: «Մինչև անգամ իմ ամուսինը, որը ինձանից ավելի թերահավատ էր, դարձել է հավատացյալ», գրեց նա: ԴՄԳ-ն, ինչ խոսք, միշտ չէ, որ կարող է օգտակար լինել, և նա որոշապես դարման չէ, բայց որոշապես արժե փորձել իմ համեստ կարծիքով:

Եթե փորձեք այն, ինձ տեղյակ պահեք: